ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին համաձայնագրում լրացում կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բելառուսի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին 2002 թվականի հունիսի 6-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 5-րդ հոդվածին համապատասխան,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի 1-ին հոդվածը լրացնել երրորդ և չորրորդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Մի Կողմի պետության քաղաքացիները մյուս Կողմի պետության տարածք մուտք գործելու ամսաթվից 30 օրվա ընթացքում ազատվում են մուտքի պետության իրավասու մարմիններում գրանցվելու (ըստ գտնվելու վայրի՝ հաշվառման կանգնելու) պարտականությունից:

Մի Կողմի պետության քաղաքացու 30 օրից ավելի ժամկետով մյուս Կողմի պետության տարածքում գտնվելու դեպքում՝ տվյալ քաղաքացին պարտավոր է գրանցվել (ըստ գտնվելու վայրի՝ հաշվառման կանգնել) մուտքի պետության իրավասու մարմիններում՝ այդ պետության օրենսդրությանը համապատասխան»:

Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Սույն Արձանագրության գործողությունը կդադարի Համաձայնագրի գործողության ավարտի հետ միասին:

Կատարված է Երևան քաղաքում 2021 թվականի հոկտեմբերի «8»-ին, երկու բնօրինակից՝ յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից՝

Բելառուսի Հանրապետության Կառավարության կողմից՝

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2021 թվականի հոկտեմբերի 8-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և Բելառուսի Հանրապետության քաղաքացիների առանց արտոնագրերի փոխայցելությունների մասին» համաձայնագրում լրացում կատարելու մասին» արձանագրության՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջազգային պայմանագրերի պահոցում (դեպոզիտում) պահվող բնօրինակի նույնական պատճենն է:

Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարության
միջազգային պայմանագրերի և
իրավունքի վարչության պետի պաշտոնակատար՝

Վահագն Փիլիպոսյան